# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ս. Տ. ԱԼԻԽԱՆՅԱՆ

Մեծ է Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման, Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման գործում։

Սովետական Ռուսաստանը 1918—1922 թվականներին հայ ժողովրդին ցույց է տվել քաղաքական, դիվանագիտական, ռազմական և տնտեսական խոշոր օգնություն։ Այդ օգնությունը, ինչ ձևով էլ արտահայտված լինի, միշտ եղել է անտահախնդիր, որովհետև այն բխել է սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափություններից, սոցիալիստական սիստեմի բուն էությունից։

Մեկ հոդվածի սահմանափակ շրջանակներում հնարավոր չէ խոսել Սովետական Ռուսաստանի բազմապիսի օգնության մասին, ուստի մենք այս հոդվածում կլուսաբանենք հայ ժողովրդին Սովետական Ռուսաստանի ցույց տված տնտեսական օգնության հարցը, ավելի ճիշտ, այդ խնդրի միայն երկու ենթահարցը։ 1. Սովետական Ռուսաստանի նյութական և բարոյական օգնությունը հայ գաղթականությանը, 2. Սովետական Ռուսաստանի տնտեսական օգնությունը Սովետական Հայաստանին։

Առաջին համաշխարհային պատերազմը խոր վերք հասցրեց հայ ժողովրդին։ Նա դարձավ արյունոտ իմպերիալիզմի դիշատիչ քաղաքականության անմեղ զոհը։ Այդ պատերազմի հենց առաջին տարիներին Արևմտյան Հայաստանի 2,5 միլիոն հայ բնակչությունից մոտ մեկ միլիոնը զոհվեց թուրքական ենիչերիների ձեռքով, իսկ մնացածը՝ իր մայր հողից բռնի տեղահանվելով քշվեց Միջագետքի ավազուտները և սփռվեց բովանդակ աշխարհով մեկ։ Թուրքական կառավարության ճիրաններից փրկված հայության մի մեծ խումբ՝ մոտ 600 հազար մարդ տեղավորվեց Հայաստանում, Վրաստանում, իսկ մի զգալի մասն էլ՝ մոտ 150 հազար մարդ, զանազան ուղիներով հասավ ռուսական հողը։

Երբ Ռազմավիրական ճանապարհով շարժվող թուրքահայ գաղթականական առաջին քարավանը հասավ Հյուսիսային Կովկաս, նրանց առաջինը դիմավորեցին բոլշևիկները։ Ս. Մ. Կիրովը, որպես Հյուսիսային Կովկասի բոլշևիկների ղեկավար, 1916 թ. փետրվարին գնաց նրանց մոտ, անձամբ ծանոթացավ հայ գաղթականության տառապալից վիճակին, որից հետո նա դիմեց ռուս ժողովրդի մարդասիրական զգացմունքներին և կոչ արեց ընդունել ընչազուրկ փախստականներին։

«Այնտեղ, հայրենիքում,— գրել է Կիրովը,— նրանք կորցրել են ամեն ինչ, կարողացել են փրկել միայն իրենց կյանքը և այստեղ մեզ մոտ պետք է դտնեն մնացածը... Անպատված, անարգված, մուրացկան դարձած նրանք թափառում են մեր երկրամասում ապաստան որոնելով... Չէ՞ որ մենք պետք է առաջինը օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացած, իր մոխրակույտերը լրած հայ գաղթականներին։ Չէ՞ որ նրանք մեզ մոտ են գալիս այն վայրերից, որտեղ նրանց ուզում են բնաջնջել և մենք պետք է նրանց դիմավորենք և ջերմացնենք»[1]։

Հայ գաղթականների հոսանքը դեպի Սովետական Ռուսաստան ուժեղացավ 1918 թ.։ Օգտվելով Սովետական Ռուսաստանի ծանր գրությունից և Անդրկովկասի նացիոնալիստական պարտիաների հակասովետական գործունեությունից, թուրքական հրոսակները 1918 թ. սկզբին ներխուժեցին Անդրկովկաս։ Նրանք Անդրկովկասի և Հայաստանի հայերի նկատմամբ շարունակեցին նույն վայրագությունները, ինչ գործադրում էին Արևմտյան Հայաստանում։

Ներխուժելով Անդրկովկաս, նրանք սկսեցին դազանարար հետապնդել իրենց անմեղ զոհերին, որոնք թուրքական սրից փրկվելու համար, Կասպից ու Սև ծովերով, Ռազմավիրական ճանապարհով, ոտքով ու սայլերով, մերկ ու բորիկ շարժվեցին դեպի Սովետական Ռուսաստան։

---

[1] Տե՛ս А. Мнацаканян, Посланцы Советской России в Армении, Ереван, 1959, էջ 83։

Հայկական Գործերի Կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» թերթի տվյալներով 1918 թ. «Օսմանյան զորքերով գրավված վայրերից հեռացել են ավելի քան 500 հազար կովկասահայ բնակիչներ։ Սրանք հեռացել են հետևյալ շրջաններից՝ Բաթումի շրջանից մոտ 20 հազար, Կարսից՝ 120 հազար, Ախալցխայից՝ մոտ 30 հազար, Ախալքալակից՝ 80 հազար, Ալեքսանդրոպոլի գավառից՝ 60 հազար, Էջմիածնի և Սուրմալուի գավառներից՝ մոտ 80 հազար, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գավառներից՝ մոտ 100 հազար»։

Հայ գաղթականների հոսանքը ավելի ուժեղացավ 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ թուրքական բանակը մոտենում էր Բաքվին։ Դեպի Պովոլժյե սկսվեց Բաքվի և Ադրբեջանի հայերի գաղթը։ Սովետական Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականների թիվը 1918 թ. վերջին անցնում էր 300 հազարից և որոշ տվյալներով հասնում մինչև 500 հազար մարդու։

Հայ գաղթականության մեծ զանգվածներ էին տեղավորվել Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում, Անդրկասպիայում, Դոնի ավազանում, Պովոլժյեում, Ուկրաինայում, Ղրիմի քաղաքներում։ Գաղթական հայերի դժբախտ քարավանի ծայրը հասել էր մինչև Չինաստան։

Ռուս ժողովուրդը, չնայած անցյալից ժառանգած և պատերազմի հետևանքով իր համար ստեղծված ծանր վիճակին, անտրտունջ ընդունեց հայ գաղթականությանը և գթառատ հոգատարությամբ իր հարկի տակ ապաստան տվեց ծեծված ու տանջված ժողովրդի բեկորներին։

Աստրախանի «Կարմիր բանվոր» թերթը նշում է, որ ռուս գյուղացին և բանվորը եղբայրաբար հյուրընկալեցին հայ գաղթականությանը, որը փախել էր հարավից՝ անգլո-գերմանա-թուրքական իմպերիալիստների օկուպացրած շրջաններից։ Հայ գաղթականությանը տեղավորելու համար նրան մեծ աջակցություն ցույց տվեց նաև Ռուսաստանի հայ բնակչությունը։ Հայ գաղթականության բնակեցման, հողով ապահովելու, նյութական օգնություն կազմակերպելու հարցերով զբաղվում էին ՌՍՖՍՌ Կարմիր Խաչի ընկերությունը, Գերիների ու փախստականների կենտրոնական կոլեգիան և տեղական Սովետները՝ տեղական պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ։

Սովետական կառավարությունը գաղթականների հարցի կարգավորման մասին 1918—1919 թթ. Վ. Ի. Լենինի ստորագրությամբ մի շարք որոշումներ ընդունեց՝ նրանց տեղավորման, նյութական օգնություն ցույց տալու, աշխատանքով ապահովելու, վերադարձի կազմակերպման, ՌՍՖՍՌ քաղաքացիություն ընդունելու և ՌՍՖՍՌ քաղաքացիությունից հանելու, ՌՍՖՍՌ տերիտորիայում բնակություն հաստատել ցանկացող գաղթականներին՝ իրավունքներով նրա քաղաքացիներին հավասարեցնելու մասին և այլն։

Պետական վերոհիշյալ ակտերով կարգավորվում էին բոլոր փախստականների, այդ թվում և հայ գաղթականության հետ կապված հարցերը։ Բոլոր մյուս ազգերի գաղթականների համեմատությամբ հայ գաղթականների դրությունն ավելի բարդ էր ու դժվարին այն պատճառով, որ, նախ, այդ գաղթականների մի մասը, որը գտնվում էր Հյուսիսային Կովկասում, Պովոլժյեում և Ուկրաինայում՝ Դենիկինի արշավանքի ժամանակաշրջանում մնաց թշնամու տերիտորիայում և մեծ չափով տուժեց դենիկինցիների դաժանություններից։ Այնուհետև, 1918 թ. ընթացքում նրա հոսանքը դեպի Սովետական Ռուսաստան չէր դադարում, և այդ այն ժամանակ, երբ հարավում մղվում էին կատաղի ճակատամարտեր, որի հետևանքով դժվարանում էր նրանց օգնություն ցույց տալը։ Երկրորդ, եթե 1918 թ. վերջին Ռուսաստանում, արևմտյան շրջաններից գերմանական զավթիչներին վոնդելուց հետո հնարավոր եղավ վերադարձնել այնտեղից փախածներին, իսկ Դենիկինի ջախջախումից հետո նա վերադարձնել Ուկրաինայից և Հարավից փախածներին, ապա Անդրկովկասից թուրքական զորքերի նահանջելուց հետո հնարավոր չեղավ հայ գաղթականության մասսայական հայրենադարձություն կազմակերպել, որովհետև անգլո-ամերիկյան իմպերիալիստները արգելակում էին անել այդ։ Այս հանգամանքները մեծ չափով ծանրացնում էին հայ գաղթականության վիճակը և սովետական օրգանների աշխատանքը։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հայ գաղթականությանը շրջապատեցին ջերմ հոգատարությամբ։ Սովետական կառավարությունը ՌՍՖՍՌ-ի տերիտորիայի հայ բնակչության կյանքին վերաբերող հարցերը լուծում էր Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատի միջոցով։ Հայկական Գործերի Կոմիսարիատը Ռուսաստանի խոշոր քաղաքներում, որտեղ հայերի մեծ համայնքներ և գաղթականների կուտակում կար, ստեղծել էր իր բաժանմունքները և լիազորությունները, որոնց միջոցով անց էր կացնում Սովետական իշխանության քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։

[1] «Կոմունիստ», 1918, № 8։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ սիստեմատիկաբար քննարկել է հայ ժողովրդի կյանքին վերաբերող հարցերը և ընդունել համապատասխան որոշումներ։ Ժողովրդական Կոմիսարների Սովետը 1918 թ. երկու անգամ քննել է հայ գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու հարցը։

Անդրկովկասի հայ գաղթականներին օգնելու նպատակով Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշմամբ 1918 թ. հունվարի 25-ին պետական բյուջեից բաց է թողնվում 3 490 000 ռուբլի և Ներքին Գործերի Կոմիսարիատի (գաղթականական գործերի բաժին) հաշվին՝ 2 704 784 ռուբլի. ընդամենը՝ 6 194 784 ռուբլի։ Այդ գումարը սակայն տեղ չի հասնում։ Այն բռնագրավվում է սպիտակգվարդիական գեներալների կողմից և ինչպես հետագայում պարզվում է, հանձնվում է Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, իսկ վերջինս գումարը յուրացնում է։ Այս մասին Կովկասի Գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը հատուկ զեկուցագիր է ներկայացնում Ժողկոմսովետին։

Հայկական Գործերի կոմիսար, Ժողկոմսովետի անդամ Վ. Ա. Ավանեսովը ստանալով Վ. Ի. Լենինի համաձայնությունը հայ գաղթականության համար նոր գումար բաց թողնելու առթիվ, հարցը մտցնում է Ժողովրդական Կոմիսարների Սովետ։

Ժողկոմսովետը Լենինի նախագահությամբ ընդունում է հետևյալ որոշումը.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետն իր 1918 թ. հունիսի 26-ի նիստում լսելով ընկ. Ավանեսովի հայտարարությունը հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին, որոշեց.

Նկատի ունենալով, որ հայ գաղթականների ոգտին 1918 թ. հունվարի 25-ին բաց թողնված 3 490 000 ռուբլի դումարով դրամը և Ներքին Գործերի Կոմիսարիատի (գաղթականական գործերի բաժին) բաց թողած 2 704 784 ռուբլի դումարը ճանապարհին գրավվել է Կալեդինի և Կոռնիլովի բանդաների կողմից, Ժողկոմսովետը, նկատի ունենալով գաղթականների ծայրահեղ կարիքը, որոշեց վերոհիշյալ գումարները (ընդամենը 6 194 784 ռուբլի) կրկին անգամ բաց թողնել Հայկական Գործերի հանձնաժողովին՝ հայ գաղթականներին անհապաղ օգնություն ցույց տալու համար։

Հիշյալ գումարն անհապաղ փոխադրել Համառուսաստանյան Կենտգործկոմի դրամարկղը Հայկական Գործերի Կոմիսարիատի համար։

Հանձնարարել Ավանեսովին և Ռոզինին անմիջապես գտնել Շահումյանի զեկույցը հայ գաղթականների համար բաց թողնված փողը Կալեդինի և Կոռնիլովի կողմից կողոպտելու մասին և պաշտոնապես հանձնել Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին, որին հանձնարարել իր հերթին այն հանձնել Պետական Վերահսկողության Ժողկոմատին»[1]։

Կովկասի ճանապարհները փակված էին սպիտակգվարդիական գեներալների կողմից, այդ պատճառով կոմիսարիատը ստացված գումարը գործադրում է Սովետական Ռուսաստանում կուտակված հայ գաղթականներին օգնություն ցույց տալու համար։ Անմիջապես կազմակերպվում է հատուկ ջոկատ Ասարախանի և Հյուսիսային Կովկասի գաղթականներին նյութապես օգնելու համար, որը Հայկական Գործերի կոմիսարի տեղակալ Վահան Տերյանի գլխավորությամբ Մոսկվայից մեկնում է հուլիսի 29-ին, իր հետ տանելով 2 միլիոն ռուբլի փող, հագուստեղեն, դեղորայք և գրականություն։

Հայկական Գործերի Կոմիսարիատի գրեթե բոլոր աշխատողները մեկնում են տեղերը։ Կատարվում է հայ բժիշկների մասսայական հավաքագրում՝ համաճարակի դեմ պայքարելու նպատակով։ ՌՍՖՍՌ-ի Առողջապահության Ժողկոմատը բաց է թողնում մեծ քանակությամբ բժշկական գործիքներ և դեղորայք, բացում է հիվանդանոցներ և բուժկետեր՝ հայ գաղթականության համար։

Սովետական կառավարության և նրա ձեռնարկումների նկատմամբ դաշնակցական կառավարության բռնած թշնամական գիրքի հետևանքով չհաջողվեց հարկ եղած օգնություն ցույց տալ Անդրկովկասի հայ գաղթականներին։ Բաքվի Սովետական իշխանության անկումից հետո Օուրքական հրոսակախմբերի հետապնդումներից փրկված հայ գաղթականների հեղեղը կուտակվեց Պովոլժյեի քաղաքներում։ Կոմիսարիատն իր առաջին խնդիրներից մեկը համարեց գաղթականության այդ հոծ զանգվածին արտակարգ օգնություն կազմակերպելը։ Կոմիսարիատն անմիջապես հատուկ ջոկատ ստեղծեց գաղթականներին օգնելու համար, տալով նրան երկու միլիոն ռուբլի։ 1918 թ. հոկտեմբերին Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիայի անդամ Հ. Ջառայանի գլխավորությամբ մի ջոկատ ուղարկվեց Պովոլժյե։ Ջոկատն իր հետ տարավ երկու վագոն

[1] ЦПА, ИМЛ, ф. 2, оп. 1, д. 6410.

# ПРОТОКОЛЪ № 147

засѣданія Совѣта Народныхъ Комиссаровъ 26-го іюля 1918 года.

6/ Заявленіе Аванесова о необходимости немедленной помощи армянскимъ бѣженцамъ.

6/ а/ Принять слѣдующее постановленіе:

Въ виду того, что деньги въ суммѣ 3.490.000 р., ассигнованные въ пользу армянъ бѣженцевъ Центральнымъ Ком-мъ по дѣламъ бѣженцевъ отъ 25/I-18р. и въ суммѣ 2.704.789 р., ассигнованные Комис-томъ Внутрен. Дѣлъ/отдѣломъ по дѣламъ бѣженцевъ/ были въ пути слѣдованія захвачены бандами Каледина и Корнилова, С.Н.К., принимая во вниманіе крайнюю нужду бѣженцевъ армянъ и ростъ числа бѣженцевъ - постановилъ повторно ассигновать вышеуказанныя суммы /всего 6.194.784р./ Комиссаріату по дѣламъ армянъ, для оказанія немедленной помощи армянамъ-бѣженцамъ.

Означенную сумму перевести немедленно въ кассу В.Ц.И.К. для Комис-та по дѣламъ армянъ.

б/ Поручить т.т. Аванесову и Розину немедленно розыскать докладъ Шаумяна по вопросу о захватѣ денегъ, ассигнованныхъ армянамъ - бандами Каледина и Корнилова и передать оффиціально въ К-тъ по Національнымъ дѣламъ, которому поручить съ своей стороны передать его въ К-тъ Государствен. Контроля.

Предсѣдатель Совѣта Народныхъ Комиссаровъ Ульяновъ (Ленинъ).

Секретарь ~~За Управляющаго делами~~ Л. Фотіева

ПОЛОЖЕНИЕ ОБ АРМЯНСКОМ ИНСТИТУТЕ В МОСКВЕ
/бывш.Лазаревский Институт/.

I. Армянский Институт в Москве /бывш.Лазаревский Институт/, обслуживающий культурно-просветительные нужды армянских трудовых масс, состоит из Единой Трудовой Школы первой и второй ступени с преподованием на армянском языке, и факультетов историко-филологического и социально-экономического и преподованием, как на армянском, так и на русском языках.

2. Впредь до полной реорганизации Института и опубликования Устава все хозяйственное и учебное дело Института находится в непосредственном ведении Комиссариата по делам Армян, который работает под общим руководством Народного Комиссариата Просвещения. Постановления и решения всех Коллегий, советов Института входят в силу лишь по утверждении Комиссара.

3. Комиссар Армянского Института в Москве назначается Комиссариатом по делам Армян и утверждается Народным Комиссариатом Просвещения.

4. Все имущество, а также все капиталы, принадлежавшие бывш. Лазаревскому Институту, остаются за Армянским Институтом в Москве и находятся в распоряжении Комиссариата по делам Армян.

5. На капиталы Института содержатся и пополняются: I/Армянский музей при Институте, 2/фундаментальная библиотека, 3/издаются материалы по истории, по армянскому языку и по истории литературы Армении.

6. Суммы на содержание Единой Трудовой Школы, а также факультетов отпускаются Народным Комиссариатом Просвещения по сметам, утверждённым Отделом Просвещения Национальных Меньшинств.-

ПРЕДСЕДАТЕЛЬ СОВЕТА НАРОДНЫХ КОМИССАРОВ:

НАРОДНЫЙ КОМИССАР ЮСТИЦИИ

УПРАВЛЯЮЩИЙ ДЕЛАМИ СОВЕТА НАРОДНЫХ КОМИССАРОВ:

Москва, Кремль,
4-го марта 1919 г.

С Е К Р Е Т А Р Ь:

կտորեղեն, հագուստ, կոշկեղեն և այլն։ Հրահանգված էր գաղթականներին օգնելու համար կազմակերպել բուժ-սանիտարական օգնություն, թեյարաններ և ճաշարաններ, աշխատանքի համար՝ բանվորական ջոկատներ, կարի, ասեղնագործական, կոշկակարական, դարբնոցային, փականագործական արհեստանոցներ և օգնություն ցույց տալ երեխաներին, վերջիններին առանձնացնել գաղթականների ընդհանուր զանգվածից, ստեղծել որբանոցներ, մանկապարտեզներ և տարրական դպրոցներ։

Հայկական Գործերի Կոմիսարիատը 1918 թ. աշնանը գաղթականներին օգնելու նպատակով ներկայացուցիչներ ուղարկեց Ղրիմի քաղաքները, Օրենբուրգ, Վորոնեժ, Ցարիցին, Ուֆա, Սամարա, Խարկով, Կուրսկ, Բրյանսկ, Դոնի-Ռոստով, Կիև։

Կոմիսարիատը Նույնպիսի աջակցություն և նյութական օգնություն էր ցույց տալիս Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում սովորող հայ ուսանողություններ։ 1918 թ. աշնանը Հայկական Կոմիսարիատի ջանքերով Մոսկվայում կազմակերպվեց հանրակացարան՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կարիքավոր հայ ուսանողների համար։ Այդ հանրակացարանը կահավորվել էր սոցիալական ապահովագրության օրգաններից ստացած ռումարներով։ Բացի դրանից, Մոսկվայում բացվեց երկու հյուրանոց հայ գաղթականների համար։

1918 թ. դեկտեմբերին Սովետական կառավարության որոշմամբ գաղթականների համար Հայկական Գործերի Կոմիսարիատի միջոցով բաց է թողնվում 1 580 758 ռուբլու արժողությամբ 286 956 արշին կտոր։ Կոմիսարիատը կազմակերպում է կարի արհեստանոցներ, կարում հագուստեղեն և ուղարկում բաժանմունքները գաղթականներին բաժանելու համար։ Այդ ժամանակ էլ ձեռք է բերվում և նրանց ուղարկում 26 741 ռուբլու արժողությամբ դեղորայք և բժշկական գործիքներ։

1918 թ. աշնանը կոմիսարիատն իր բաժանմունքների միջոցով գաղթականներին որպես նպաստ բաժանել է հետևյալ գումարները՝ Աստրախանի բաժանմունքին՝ 474 000 ռուբլի, Սարատովի բաժանմունքին՝ 130 930 ռ., Ցարիցինի լիազորությանը՝ 100 000 ռ., Խարկովի բաժանմունքին՝ 118 000 ռ., Կիևի բաժանմունքին՝ 100 000 ռ., Հյուսիսային Կովկասին՝ 515 907 ռ., Սամարային՝ 55 500 ռ., Պոլոլժյեի ջոկատի միջոցով՝ 2 040 ռ., Կուրսկին՝ 21 000 ռ.։

Վ. Ի. Լենինը այդ ծանր տարիներին հատուկ հոգատարությամբ հետաքրքրվում էր հայ գաղթականների վիճակով։ Վ. Ի. Լենինի ցուցումով Հայկական Գործերի Կոմիսարիատը 1918—1920 թթ. ստացավ և գաղթականներին բաժանեց մեծ քանակությամբ դրամ, հագուստեղեն, կոշկեղեն և մանուֆակտուրա։ Միայն 1918—1919 թթ. 10 ամսում հայ գաղթականությանը կենտրոնացված կարգով բաժանվել է որպես նպաստ ավելի քան 10 միլիոն ռուբլի դրամ, 350 հազար արշին գործվածք, 30 հազար կտոր պատրաստի հագուստ և մեծ քանակությամբ կոշկեղեն։

Վ. Ի. Լենինի հատուկ ցուցումներով հայ գաղթականների մանուկների համար Ռուսաստանի տարբեր քաղաքներում կազմակերպվում են տասնյակ որբանոցներ, դպրոցներ, մանկապարտեզներ, արհեստանոցներ, ճաշարաններ, բուժ. կետեր։ Աստրախանում բացվում է որբանոց 100 որբերի համար, որոնց վրա կատարած ծախսերը միայն 1919 թ. վեց ամսում կազմել են 400 հազար ռուբլի։ Նույն տեղում բացվել է գաղթական երեխաների աշխատանքային դպրոց 250 աշակերտների համար։ Կազմակերպվել է հիվանդանոց 100 մահճակալով։

Սովետական կառավարության և ռուս ժողովրդի նյութական ամբողջ օգնությունը չի սահմանափակվում սրանով։ Այստեղ բերված թվերը վերաբերում են միայն կենտրոնից ստացված միջոցներին, իսկ թե քանի տասնյակ միլիոնների արժողությամբ օգնություն են ստացել հայ գաղթականները տեղական Սովետներից, այդ բոլորը այստեղ չի հաշվված։

Սովետական Ռուսաստանը հայ գաղթականությանը ցույց է տվել ոչ միայն նյութական, այլև բաղաքական, բարոյական և կուլտուրական օգնություն։ Սովետական կառավարությունը 1918—1920 թթ. Ռուսաստանում բացեց մեծ քանակությամբ հայկական նոր դպրոցներ, ակումբներ, գրադարաններ, ընթերցարաններ, թատրոններ, հայ արվեստի թանգարաններ։ Մեծահասակների համար բացվեցին անգրագիտության վերացման և քաղգրագիտության հարյուրավոր դպրոցներ և այս ամենը սովետական տեղական և կենտրոնական օրգանների բյուջեի հաշվին։

Հայկական Գործերի Կոմիսարիատը առաջին հերթին զբաղվեց Մոսկվայի Լազարյան ճեմարանի հարցով, մի հիմնարկ, որ հանդիսացել է Ռուսաստանում հայ կուլտուրայի ամենահին, ամենամեծ օջախը և տվել է մի շարք առաջադեմ հայ գործիչներ։ Սակայն Լազարյան ճեմարանը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ծառայում էր հայ բուրժուազիայի և կղերականության շահերին ու գտնվում էր նրանց ինչպես նյութական խնամակալության, այնպես էլ գաղափարական վերահսկողության տակ։

1918 թ. հունիսի 22-ին ՌՍՖՍՌ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի և Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիաների համատեղ որոշմամբ Պողոս Մակինցյանը նշանակվեց Լաղարյան ճեմարանի կոմիսար, որի վրա դրվեց ճեմարանի կառավարման ամբողջ պատասխանատվությունը։

1918 թ. հունիսի 28-ին ՌՍՖՍՌ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատը վերացնում է Լաղարյան ճեմարանի հոգաբարձուի պաշտոնը և ճեմարանին կից գոյություն ունեցող հասարակական կոմիտեն։ Հենց այդ ժամանակ էլ Լաղարյան ճեմարանը վերանվանվում է Մոսկվայի Հայկական ինստիտուտ։

Հայկական Գործերի Կոմիսարիատի որոշմամբ Վ. Տերյանի գլխավորությամբ ստեղծվում է նախկին Լաղարյան ճեմարանի՝ Հայկական ինստիտուտի կանոնադրությունը մշակող հանձնաժողով։ Կազմված նախագիծը Հայկական Գործերի Կոմիսարիատի կոլեգիայում քննելուց և հաստատելուց հետո, ներկայացվում է Ժողկոմսովետի հաստատմանը։

1919 թ. մարտի 4-ին Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ ընդունում է «Դեկրետ Մոսկվայում գտնվող Հայկական ինստիտուտի մասին»։

Դեկրետում ասված է, որ Հայկական ինստիտուտը, որը սպասարկում է հայ աշխատավոր մասսաների կուլտուր-լուսավորական կարիքները, կազմված է առաջին և երկրորդ աստիճանի տնտեսական աշխատանքային դպրոցներից, որտեղ դասավանդումը կատարվում է հայերեն լեզվով, և պատմա-ֆիլոլոգիական ու սոցիալ-տնտեսական ֆակուլտետներից, որտեղ դասավանդումը կատարվում է ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով։

Այդ դեկրետով ինստիտուտի ղեկավարությունը գրվեց Հայկական Գործերի Կոմիսարիատի և ՌՍՖՍՌ Լուսավորության Ժողկոմատի վրա, նախկին Լաղարյան ճեմարանին պատկանող ամբողջ գույքը և միջոցները հատկացվեցին Հայկական ինստիտուտին։ Այսպիսով, Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետով, Լաղարյան ճեմարանը վերացվեց հայ բուրժուազիայի ձեռքից և հանձնվեց իր իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին։

1918 թ. հոկտեմբերի 21-ին սկսվեց Հայկական ինստիտուտի և աշխատանքային դպրոցի ուսումնական տարին։ Ինչպես ինստիտուտի ուսանողները, այնպես էլ միասնական աշխատանքային դպրոցի աշակերտները տեղերում հավաքագրվում են Հայկական Գործերի Կոմիսարիատի աշխատողների միջոցով։ Սովորողներին ապահովում էին օրապահիկով և հանրակացարանով։ Դասագրքերը և գրենական պիտույքները տրվում էին ձրի։ Որը աշակերտներն ապահովվում էին հագուստով։

Հայկական Գործերի Կոմիսարիատը մեծ ջանքեր թափեց Հայկական ինստիտուտի վերակազմության ուղղությամբ։ Ինստիտուտը պետք է հանդիսանար ժողովրդական կրթության սիստեմի կազմակերպման այն բազան, որի հիման վրա պետք է սկսվեր ժողովրդական կրթության գործը Սովետական Հայաստանում։ Վ. Ավանեսովը և Վ. Տերյանը անձամբ զբաղվում էին Հայկական ինստիտուտի և միասնական աշխատանքային դպրոցի ուսումնա-դաստիարակչական ու կազմակերպական աշխատանքներով։

Սովետական Ռուսաստանում նոր, սովետական դպրոցի, այդ թվում նաև հայկական սովետական դպրոցի ստեղծման փորձը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո ժողովրդական կրթության գործը կազմակերպելու համար։ 1920 թ. դեկտեմբերին Հայկական ՍՍՌ Լուսժողկոմատը որոշում կայացրեց Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում ժողովրդական համալսարան հիմնելու մասին։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը Մոսկվայի Հայկական ինստիտուտի (նախկին Լաղարյան ճեմարանի) ամբողջ գույքը, գրադարանը, դասագրքերը, թանգարանը, արխիվները հանձնեց Սովետական Հայաստանին, իսկ Լաղարյան ճեմարանի շենքը Կենտգործկոմի որոշմամբ 1921 թ. հոկտեմբերին վերածվեց Հայկական կուլտուրայի տան, որը պահպանվեց մինչև 1953 թ.։

Սովետական Ռուսաստանի մեծ օգնությամբ զգացված երախտապարտ հայ գաղթականները իրենց շնորհակալական խոսքերն ուղղեցին Սովետական կառավարությանը։

1919 թ. Սարատովի գաղթականները գրել են.

«Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հետևանքով օթևանից զրկված և Սովետական Ռուսաստանում ապաստան գտած տաճկահայ գաղթականների զանգվածը եղբայրական ողջույն է հղում և երախտագիտության զգացմունք է հայտնում ռուսական ռևոլյուցիոն պրո-

լետարիատին և գյուղացիությանը ի դեմս Ժողովրդական Կոմիսարների Սովետի՝ նրանց կողմից ցուցաբերված ընդառաջման և ընկերական աջակցության համար»։

Հայկական Գործերի կոմիսար Ավանեսովի հասցեով ուղարկված հայ գաղթականների մի նամակում ասված է.

«Մենք, Տաճկահայաստանի վրա իշխող բռնակալների երկաթյա ճնշման տակ դարեր շարունակ արյուն արցունք թափող ժողովրդի բեկորներս, արյունոտ, սրտաճմլիկ շատ պատմելիք ունենք աշխարհ ավերած իմպերիալիստական պատերազմի մասին։ Արյունարբու բռնակալներն իրենց երկաթյա ճիրանները խրեցին մեր սրտերը, հագեցան մեր արյունով, ավերեցին մեր հայրենի օջախները և լափեցին քրտինքով ձեռք բերած մեր հացը։ Մենք չգտանք աջակցող ձեռք, որն ի պատասխան մեր ողբերին, օգներ մեզ մեր կարիքի և վշտի մեջ, տանջանքների մատնված՝ մենք բարշ էինք տալիս մեր կյանքը՝ թափառելով սար ու ձոր, քաղցած և մերկ, մինչև ոտք չդրինք այն հողը, որին հովանի է ուսուցիչն Կարմիր դրոշը — Սովետական ռեսպուբլիկայի տերիտորիան։ Այստեղ մենք գտանք եղբայրական ջերմ ընդունելություն, բարոյական և նյութական լրիվ աջակցություն։ Օթևանի, հագուստեղենի և սննդի հետ միասին մենք կարողացանք ապրել հոգևոր աշխարհի և կուլտուրայի քաղցրությամբ։ Ֆիզիկապես ուժասպառ և բարոյական առնականությունը կորցրած մեր այս կացության մեջ, մեզ օգնության եկավ Ռուսաստանյան Սովետական Ռեսպուբլիկան... Հայկական Գործերի Կոմիսարիատը։ Այս բանի համար մենք նրանց արտահայտում ենք անկեղծ ու ջերմ շնորհակալություն և միշտ, ի լուր բոլորի, կասենք նրանց ընդօրինակման արժանի գործունեության մասին։

Կեցցե՞ Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկան...»[1]։

Վերոհիշյալ փաստաթղթերը ցայտուն կերպով արտահայտում են հայ ժողովրդի սերն ու երախտագիտությունը Կոմունիստական պարտիայի և նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի նկատմամբ։

* * *

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ բանվորները և գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալեցին դաշնակների տիրապետությունը և հաստատեցին Սովետական իշխանություն։ Հայաստանի Ռևկոմը նոյեմբերի 29-ին իր հրապարակած դեկլարացիայում և Դիլիջանից նոյեմբերի 30-ին Վ. Ի. Լենինին հղած հեռագրում դիմեց Սովետական Ռուսաստանի կառավարությանը, խնդրելով ռազմական աջակցություն ցույց տալ երկիրը դաշնակներից ազատագրելու գործում, միջնորդ հանդիսանալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում և ցույց տալ նյութական աջակցություն քայքայված Հայաստանը վերականգնելու, ժողովրդին սովից փրկելու համար։ Դեկլարացիայում վստահորեն հույս էր հայտնվում, որ «Խորհրդային Ռուսաստանը մեզ եղբայրական օգնություն ցույց կտա, հնարավոր չափով հաց և ճոթեղեն հասցնելով»։

ՌԿ(բ)Պ Կենտկոմը և Ժողովրդական Կոմիսարների Սովետը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ այդ օրերին ձեռնարկում էին բոլոր արտակարգ միջոցները Սովետական Հայաստանին և նրա Ռևկոմին անհրաժեշտ քաղաքական, ռազմական, տնտեսական և դիվանագիտական աջակցություն ցույց տալու ուղղությամբ։

ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն 1920 թ. դեկտեմբերի 4-ին քննելով Սովետական Հայաստանին անհապաղ օգնություն ցույց տալու հարցը, նախ և առաջ որոշում է Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի խնդիրները հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու ասպարեզում։ Քաղբյուրոն միաժամանակ հանձնարարում է Կազմբյուրոյին Սովետական Ռուսաստանից մորիլիզացնել և շուտափույթ Հայաստան ուղարկել մաքսիմալ թվով հայ կոմունիստներ։ Վ. Ի. Լենինի առաջարկով Սովետական կառավարությունը զբաղվում է Հայաստանին հացով անհապաղ օգնություն ցույց տալու հարցով։

Սովետական կառավարությունը ցուցում է տալիս 11-րդ բանակի ֆոնդից առանձնացնել 50 վագոն հացահատիկ և Բաքվից շտապ ուղարկել Երևան։ Բաքվից Հայաստանին հատկացվում է նավթամթերքների հատուկ ֆոնդ։

ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որն անմիջականորեն իրագործում էր Կենտկոմի և Լենինի ցուցումները Հայաստանում Սովետական իշխանության

---

[1] ЦГАОР. ф. 1318, л. 40.

[2] Նույն տեղում։

հաստատման և ամրապնդման ուղղությամբ, ձեռնարկում է բոլոր միջոցները, որպեսզի հարկաորի Վրաստանի մենշևիկյան կառավարություններ բաց թողնելու Հայաստան ուղարկվող գնացքները։ Նա դեկտեմբերի 2-ին Սովետական Ռուսաստանի Վրաստանի լիազոր Ռեյմանին գրում է.

«Զափազանց անհրաժեշտ է Վրաստանի վրայով տրանզիտի իրավունք ստանալ դեպի Հայաստան։ Խնդրում եմ այդ հարցը դնել Վրացական կառավարության առաջ։ Ինչպե՞ս է հնարավոր չուտ պատրաստել դիծը։ Տրանզիտից պետք է օգտվենք Հայաստան հաց փոխադրելու համար»[1]։

Դեկտեմբերի 7-ին Հայաստանի Ռևկոմին հաղորդելով ՌԿ(բ)Պ Կենտկոմի և Ժողկոմսովետի ձեռնարկած միջոցները, Սովետական Ռուսաստանի կառավարության անունից Օրջոնիկիձեն հայտարարում է հետևյալը.

«Թող Հայաստանի բանվորները և գյուղացիներն իմանան, որ Սովետական Ռուսաստանի բոլոր ուժերը և եռանդն ի սպաս կդրվեն Սովետական Հայաստանին։ Թող իմանան, որ Ռուսաստանի բանվորները, գյուղացիները և Կարմիր Բանակը կբաժանեն հացի իրենց համեստ պահուստը Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ»[2]։

Դեկտեմբերի 13-ին Սովետական Ռուսաստանի կառավարության նախագահ Վ. Ի. Լենինը Կրեմլում ընդունում է Հայաստանի Ռևկոմի անդամներ Սահակ Տեր-Գարրիելյանին և Ասքանազ Մռավյանին։ Հայաստանի Սովետական կառավարության անդամները Լենինին պատմում են Հայաստանի ծանր, անելանելի տնտեսական դրության մասին։

Լենինն իրեն հատուկ մեծագույն ուշադրությամբ լսելով Հայաստանի Ռևկոմի անդամների հաղորդումը Հայաստանի Սովետական իշխանության համար ստեղծված ներքին և միջազգային ծանր պայմանների մասին, հայտնում է. «Մենք ամեն կերպ կօգնենք հայ ընկերներին, դա ինքնըստինքյան հասկանալի է»[3]։

Անդրադառնալով Հայաստանին տնտեսական օգնություն ցույց տալու հարցին Լենինը Ռևկոմի պատվիրակներին ասում է.

Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ[4]։ Եվ իրոք, այդ նույն օրը Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշում է ընդունում Հայաստանին բաց թողնել, որպես առաջին օգնություն, երեք միլիարդ ռուբլի դրամ։ Այդ գումարը Վ. Ի. Լենինի կարգադրությամբ բաց է թողնվում Ա. Մռավյանին, որը անմիջապես փոխադրում է այն Հայաստան։

Վ. Ի. Լենինը ցուցում է տալիս համապատասխան ժողկոմատներին իրենց ռեզերվներից հատկացումներ կատարել Սովետական Հայաստանին մատակարարելու նպատակով։ Սովետական Ռուսաստանի տնտեսության քայքայվածության պայմաններում դա մեծ զոհողություն էր, բայց ռուսական պրոլետարիատը ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ գաղափարով, հացի իր պատառիկը կիսում էր հայ գյուղացու հետ։ Սովետական Հայաստանի լիազոր Ս. Տեր-Գարրիելյանը Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ կազմում է Սովետական Հայաստանի մատակարարման պահանջագիր, որը Ս. Մ. Կիրովի և Գ. Կ. Օրջոնիկիձեի դրական եզրակացությունից հետո հաստատվում է ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյում և հանձնարարվում Մատժողկոմատին և մյուս համապատասխան ժողկոմատներին անհապաղ իրագործել այն։ Այդ ծանր ժամանակներում Հայաստանի մատակարարման գործում պետք է նշել և Ս. Տեր-Գարրիելյանի անձնուրաց ծառայությունը հայ ժողովրդին։ Սահակ Տեր-Գարրիելյանի գործիմացությունը և բարձր հեղինակությունը, Լենինի վստահությունը դեպի նա, մեծ չափով նպաստել են Ս. Տեր-Գարրիելյանի բեղմնավոր աշխատանքին, որպես Սովետական Հայաստանի լիազոր ներկայացուցչի։ Նշված պահանջագրերով որոշվում է Սովետական Ռուսաստանից Հայաստանին բաց թողնել 2 միլիոն արշին մանուֆակտուրա, 1,5 միլիոն մարդու հաշվով՝ 6 ամսվա դեղորայք, մեկ միլիոն ոսկու արժողությամբ վալյուտա՝ Իրանից մթերքներ գնելու համար և հացի կանոնավոր մատակարարում ամսական 250 հազար փութի հաշվով։ Նախատեսվում է բաց թողնել նաև շաքար, օճառ, լուցկի, թուղթ և արդյունաբերական այլ ապրանքներ։ Որոշվում է առաջիկա գարնանացանի համար Հայաստանին մատակարարել սերմացու և գյուղատնտեսական գործիքներ։ Միաժամանակ որոշվում է Հայաստանին հանձնել Մոսկվայում գտնվող էաղարյան ճեմարանի գրադարանը և թանգարանը։

---

[1] ЦПА ИМЛ, ф. 85. оп. 14. д. 39.
Նույն տեղում, д. 35.
[2] «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1925։
[4] Նույն տեղում։

Բայց դժբախտաբար այս ամենի արագ փոխադրումը Հայաստան շուտով չի հաջողվում, քանի որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը փակել էր երկաթգիծը Հայաստանի առջև, իսկ Ալեքսանդրոպոլում նստած թուրքական զորքերը իրենց ձեռքին էին պահում երկաթգիծը դեպի Երևան։ Անհրաժեշտ էր նախ և առաջ կոտրել Վրաստանի մենշևիկների համառ դիմադրությունը, բացել երկաթգիծը։ Այդ գործին ևս անմիջականորեն միջամտում է Վ. Ի. Լենինը։ Նա դեկտեմբերի 13-ին իր մոտ է կանչում մենշևիկյան Վրաստանի ներկայացուցիչ Մախարաձեին և պահանջում վերջ տալ Սովետական Հայաստանի դեմ հարուցվող թշնամական գործողություններին, անհապաղ բացել երկաթգիծը և բաց թողնել Սովետական Ռուսաստանից Հայաստան ուղարկվող հացի և այլ մթերքների գնացքները։ Անդրադառնալով Հայաստանին մատակարարելու կապակցությամբ Վրաստանի հետ վարած բանակցություններին, Մոսկվայի Սովետի պլենումում արտասանած ճառում Լենինն ասել է.

«Ոչ ոք համբերություն չի ունենա կարդալու այն հեռագրերը, հայտարարությունները ու բողոքները, որ մենք այդ առթիվ փոխանակել ենք Վրաստանի հետ։ Եվ այդ ամենում անձնապես մասնակցել է ինքը Վլադիմիր Իլյիչը։

Մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո, վերջապես, հաջողվում է լուծել հարցը։ Դեկտեմբերի 18-ին Ազստաֆայում երկար կանգնելուց հետո Թիֆլիսի վրայով դեպի Երևան է շարժվում հացով և նավթով բարձված առաջին գնացքը։ Այդ գնացքի մուտքը Հայաստան մեծ խանդավառություն առաջացրեց Հայաստանի սովյալ մասսաների մեջ։

«Հացը գալիս է...» խորագրով իր առաջարանում ՀԿ(բ)Պ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը դեկտեմբերի 21-ին գրել է. «Գալիս է հակառակ մենշևիկյան Վրաստանի բոլոր ոտնձգություններին։ Գալիս է ոչ թե ամբողջ աշխարհը թալանող Ամերիկայից ու Անգլիայից, որ հետամնաց երկրների ստրկացած ժողովուրդներից կողոպտած հացը «սովյալ» Հայաստան էին ուղարկում, որպեսզի այսպիսով նոր ստրուկներ ու թնդանոթի միս ընձեռնեն Հայաստանի լեռներում ու ձորերում։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կերան այդ հացը, կերան ու հագարներով մեռան։ Հաց է գալիս Խորհրդային Հանրապետությունից, ուր առաջին անգամ աշխարհում բանվորներն ու գյուղացիները տեր են դառել իրենց աշխատանքին և իրենց կոշտացած ձեռքերով հավաքած բերքի ու հարստության մի մասը սոված բերնից կտրելով՝ ուղարկում են հայ և օտարազգի բուրժուազիայի լծից ազատագրված Հայաստանի բանվորների ու գյուղացիների համար»։

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, սակայն, մեկ գնացք բաց թողնելուց հետո զանազան պատրվակներով կրկին փակեց երկաթգիծը, նպատակ ունենալով սովի ճիրաններում խեղդամահ անել մանուկ Սովետական իշխանությունը Հայաստանում, և տապալել այն՝ դաշնակների նախապատրաստվող ավանտյուրայի ժամանակ։ Այդ նույն նպատակին էր ձգտում նաև Ալեքսանդրոպոլում նստած Քյազիմ Կարա-Բեքիրը Հայաստան ուղարկվող վագոնները կողոպտելով։ Իսկ Ազստաֆա-Երևան խճուղին փակված էր խոր ձյունով։ Սաստիկ ձմեռն էլ սովյալ, մերկ, վառելիքից զուրկ Հայաստանի երրորդ թշնամին էր։ Հայաստանին հաց և պարենամթերքներ մատակարարելու մի հնարավորություն կար՝ գնել Իրանում հաց, բրինձ, անասուն և այլ մթերքներ, և դրանք երկաթուղով, Նախիջևանի վրայով, փոխադրել Հայաստան։ Բայց դրա համար հարկավոր էր ոսկի։ Եվ ահա Վ. Ի. Լենինի ցուցումով այդ հարցերով էլ սկսեցին զբաղվել սովետական ու պարտիական ղեկավար օրգանները։

Գ. Վ. Չիչերինը 1921 թ. փետրվարի 7-ին Վ. Ի. Լենինին գրել է հետևյալ նամակը. «Դուք գիտեք, որ Սովետական Հայաստանը հյուսիսից և հարավից բլոկադայի ենթարկվելու հետևանքով գտնվում է ազետալի դրության մեջ։ Հենց նոր ժամանած Լեգրանը հնարավոր է համարում Մակուի խանությունում Հայաստանի համար պարենամթերքներ գնել, բացի այդ, համաձայն նրա խոսքերի, այդ նպատակով հնարավոր կլինի գործադրել պարսկական արծաթյա թումանները և քրոնները, որոնք գտնվում են Օրջոնիկիձեի մոտ։ Իմ հարցմանը ընկ. Օրջոնիկիձեն պատասխանել է. «Պարենամթերքների գնման միակ շրջանը, դա Մակուի խանությունն է, որի համար անհրաժեշտ է ոսկի դրամ։ Ես դեռ նրա հետ պետք է պարզեմ այդ նպատակի համար պարսկական արծաթյա դրամի օգտագործման հնարավորությունը, բայց և այնպես, իմ կարծիքով անպայմանորեն անհրաժեշտ է հանուն Սովետական ռեսպուբլիկայի փրկության դիմել այդ քայլին։ Սպասում եմ Ձեր կարծիքին այդ առթիվ, որպեսզի բոլոր ուղղություններով ձեռնարկվեն արտակարգ միջոցներ»։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 175—176։

Սովյալ Հայաստանի մատակարարման գործում մեծ հոգատարություն դրսևորելու հարցում պետք է նշել Գ. Վ. Չիչերինի և Գ. Կ. Օրջոնիկիձեի բացառիկ դերը։ Վ. Ի. Լենինի ցուցումը ստանալուց հետո, ծավալվում է մեծ աշխատանք։

Վ. Ի. Լենինը Հայաստանի մատակարարման գործին լուրջ նշանակություն տալով, հարցը մտցրել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրո։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն 1921 թ. մարտի 2-ին ստեղծում է Հայաստանի մատակարարման հանձնաժողով՝ համապատասխան ժողկոմատների ներկայացուցիչներից, Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչներ Ա. Բեկզադյանի և Ս. Տեր-Գարրիելյանի մասնակցությամբ։ Քաղբյուրոն հանձնարարում է հանձնաժողովին անհապաղ կապվել ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի հետ և պարզել նրանց հնարավորությունները և միջոցառումները Հայաստանի մատակարարման ուղղությամբ։ Հանձնարարել հանձնաժողովին, ասված է որոշման մեջ, գտնել սովյալ Հայաստանին պարեն մատակարարելու բոլոր ուղիները, միաժամանակ հնարավոր համարել այդ նպատակով անհրաժեշտ զոհողությունների գնալը։ Եթե հանձնաժողովում բավարար միահամուռություն լինի, ապա հանձնարարել նրան ձեռնարկած միջոցները իրագործել անհապաղ։ Հանձնարարվում է ընկեր Քաթանյանին՝ Քաղբյուրոյին ներկայացնել գրավոր զեկուցագիր հանձնաժողովի գործունեության մասին։ Քաղբյուրոյի հանձնաժողովն իր նիստերում մանրազնին քննարկում է Հայաստանի մատժողկոմ Ա. Բեկզադյանի պահանջագիրը, ըստ որի Հայաստանին ամսական անհրաժեշտ էր 275 հազար փութ հաց, 1 200 հազար բնակչության և 300 հազար գաղթականների համար, յուրաքանչյուր շնչին օրական $^1/_4$ գրվանքայի հաշվով։ Հանձնաժողովը բացի այս հաշվի է առնում, որ Հայաստանին պետք է մատակարարել սերմացու, անասուններ, հատկապես քաշող ուժ, արդյունաբերական ապրանքներ և այլն։ Հանձնաժողովը գալիս է այն եզրակացության, որ Հյուսիսային Կովկասից Հայաստանին հնարավոր է մատակարարել ամսական միայն 50 հազար փութ հաց, ուստի խնդիր է դնում հարցը տեղափոխել Քաղբյուրո, որպեսզի Հայաստանի հացի պահանջի մնացած մասը Մակուի խանությունում գնելու համար անհրաժեշտ ոսկի բաց թողնելու սանկցիա տրվի։

Հանձնաժողովի աշխատանքի ժամանակաշրջանում Հայաստանի պահանջագրի վերաբերյալ ծագում են որոշ առարկություններ։ Նկատի ունենալով Հայաստանի արտակարգ ծանր գրությունը, Չիչերինը հատուկ նամակով Վ. Ի. Լենինին զեկուցում է գործի էությունը և խնդրում անձամբ միջամտել։

Վ. Ի. Լենինի ցուցումով հանձնաժողովը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարի, համապատասխան ժողկոմատների ներկայացուցիչների, ինչպես նաև Ալ. Մյասնիկյանի, Քաթանյանի, Բեկզադյանի, Տեր-Գարրիելյանի մասնակցությամբ 1921 թ. ապրիլի 3-ին քննում է հարցերը և որոշում.

ա) Հանձնարարել Մատժողկոմատին Հայաստանին մատակարարել ամսական 50 հազար փութ հաց։

բ) Անհրաժեշտ գտնել Հայաստանին տրամադրել վալյուտա, որ հավասարարժեք լինի մեկ և կես միլիոն ռուբլու (ոսկով) և ապահովի Հայաստանի համար 650—700 հազար փութ հացի գնում։

գ) Առաջարկել Ֆինժողկոմատի և Մատժողկոմատի ներկայացուցիչներին երեք օրում սույն որոշումը ձևակերպել սովետական դծով։

դ) Անհրաժեշտ համարել ստեղծելու Հայաստանին օգնող հատուկ հանձնաժողով։

ե) Սույն որոշումների հաստատումը փոխագրել Քաղբյուրու։

Հանձնաժողովի եզրակացությունները անմիջապես ներկայացվում են Վ. Ի. Լենինին։ Հանձնաժողովի նիստի հաջորդ օրը, ապրիլի 4-ին Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է ընդունում Մակուի խանությունում Հայաստանի համար հաց և այլ մթերքներ գնելու նպատակով Հայաստանին բաց թողնել 1 500 հազար ռուբլի (ոսկով)։

Ապրիլի 8-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն լսում է Հայաստանի մատակարարման հանձնաժողովի զեկուցումը, հավանություն տալիս հանձնաժողովի եզրակացություններին։ Քաղբյուրոն հանձնարարում է Կենտկոմի քարտուղարությանը խստիվ հսկել հանձնաժողովի որոշումների կատարմանը։

Շնորհապարտ հայ ժողովուրդը բարձր գնահատեց ռուսական պրոլետարիատի այդ մեծ օգնությունը։ Հայանելով Հայաստանի աշխատավորության երախտագիտությունը, «Կոմունիստը» 1921 թ. ապրիլի 28-ին «Եղբայրական օգնություն» խորագրով խմբագրականում գրում է, որ «Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշել է Խորհրդային Հայաստանի կարիքների համար մեկ և կես միլիոն ռուբլու (ոսկով) վարկ բաց անել... Իմպերիալիստական պատերազմից և դաշնակների տիրապետությունից խորապես հյուծված Խորհրդային

Հայաստանի համար մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ բաց անելը ռուսական բանվորների կողմից հանդիսանում է այն տեսական ապացույցը, թե նրանք ինչ աստիճանի մոտիկ են ընդունում իրենց սրտին հայ հեղափոխական գյուղացիության շահերը։

Նկարագրելով Սովետական Ռուսաստանի տնտեսական փլուզումն ու քայքայումը, ռուսական բանվորների և գյուղացիների ծանր վիճակը, թերթը շարունակում է. «Եվ այդպիսի ծանր մոմենտում Ժողկոմսովետը որոշում է ռուսական ոսկու պաշարի մի մասը բաժին հանել աշխատավորական Հայաստանին։ Կողոպտված, հյուծված ու տանջված Ռուսաստանը տեսնելով հայ գյուղացիների ծանր կացությունը, որոշում է եղբայրաբար բաժանել նրա հետ իր առանց այն էլ նվազ պաշարը։ Արդյոք դա ամենաբարձր օրինակը չէ՞ աշխատավորական համերաշխության»։

Սովետական կառավարությունը նշված գումարը Հայաստանին բաց թողնելուց հետո, բանակցություններ վարեց և իր առևտրական ներկայացուցիչներին ուղարկեց Մակուի խանություն՝ այնտեղ Հայաստանի համար գնումներ կատարելու։

Դաշնակների 1921 թ. փետրվարի ավանտյուրայի հետևանքով գրությունը Հայաստանում ավելի վատացավ։

Սարգիս Կասյանը և Ավիս Նուրիջանյանը Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում 1921 թ. ապրիլի սկզբին հայտնում էին, որ դաշնակները Երևանից հեռանալու ժամանակ իրենց հետ տարել են պետական բոլոր արժեքները, բոլոր գրամանիշները, ինչպես սովետական, այնպես էլ հայկական։ «Խնդրում ենք Ձեզ հետ վերցնել մինիմում միլիարդ սովետական ռուբլի Պարսկաստանում պարենամթերքների գնումներ կատարելու համար»[2]։

Ստանալով այսպիսի տագնապալի տեղեկություններ, Օրջոնիկիձեն, որն այդ օրերին պատրաստվում էր Հայաստան գնալ, հեռագրում է Վ. Ի. Լենինին Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի, տնտեսական ծանր վիճակի մասին։

Վ. Ի. Լենինը, պատասխանելով Օրջոնիկիձեի հեռագրին, ապրիլի 9-ին գրում է. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին։ Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ. Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք Պարենկոմին արված ամեն տեսակ հանձնարարությունները։

Բայց ես պետք է նախազգուշացնեմ, որ մենք այստեղ խիստ կարիքի մեջ ենք և օգնել չենք կարող։ Համառորեն պահանջում եմ ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան, ամբողջ ուժով սեղմեցեք կոնցեսիաների վրա, առանձնապես Վրաստանում. աշխատեցեք սերմացու գնել Թեկուզ և արտասահմանում և առաջ մղել ոռոգումն Ադրբեջանում Բաքվի ռեսուրսների օգնությամբ հողագործությունն ու անասնապահությունը զարգացնելու համար, ինչպես և աշխատեցեք զարգացնել ապրանքափոխանակությունը Հյուսիսային Կովկասի հետ...»[3]։

Գ. Կ. Օրջոնիկիձեն ապրիլի երկրորդ կեսին լինում է Երևանում և Հայաստանի մի շարք վայրերում։ Նա ականատես է լինում ծանր պատկերների, որոնց մասին իրեն հատուկ անմիջականությամբ հայտնում է Լենինին և ՌԿ(բ)Պ Կենտկոմին. «Այսօր վերադարձա Երևանից։ Դրությունն այնտեղ կայուն է, բայց սարսափելի սով է։ Մարդիկ տառացիորեն սովից մեռնում են փողոցներում»[4]։

Վերադառնալով Հայաստանից Օրջոնիկիձեն գրաղվում է Հայաստանի մատակարարման գործով։

1921 թ. ապրիլի 7-ին Վ. Ի. Լենինին հղած հեռագրում Օրջոնիկիձեն մատնանշում էր Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի մատակարարման վատ վիճակը։ Լենինը ստանալով Օրջոնիկիձեի տագնապալի հեռագիրը, Պարենժողկոմատի կոլեգիայի անդամ Ա. Խալատովին գրում է հետևյալ երկտողը.

«Կարդացեք և վերադարձրեք Ձեր եզրակացությամբ։ Արդյոք ոչինչ չի՞ կարելի անել. խոսեցեք ուղիղ գծով Ֆրումկինի հետ»[5]։

Պատասխանելով Լենինին Խալատովը հեռագրի մյուս երեսին շարադրել է Հայաստանին և Վրաստանին հաց մատակարարելու վերաբերյալ ձեռնարկված բոլոր միջոցառումները։ Այդ նույն օրը ստանալով Մ. Ի. Ֆրումկինի հեռագիրը Հայաստանի և Անդրկովկասի մատակարարումը ուժեղացնելու մասին, հատուկ երկտողով Խալատովը այդ մասին ևս զեկուցում է Լենինին։

---

[1] «Կոմունիստ», 28 ապրիլի, 1921։

[2] ՀԿՊ Կենտկոմի արխիվ, ֆ. 33, գ. 1241, ց. 1։

[3] Վ. Ի. Լենին, հատ. 35, էջ 521։

[4] ЦПА, ИМЛ, ф. 85, оп. 14, д. 55.

[5] „Ленинский сборник", I, 20, էջ 227։

Վ. Ի. Լենինը սովորություն ուներ իր հանձնարարությունների կատարումը ստուգել անձամբ և իրեն մատչելի բոլոր ճանապարհներով։ Ապրիլի 15-ին Պարենժողկոմատի Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչ Մ. Ի. Ֆրումկինին և Դոնի-Ռոստովի տնտեսական խորհրդի նախագահ Ա. Գ. Բելորորոգովին հասցեագրած հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Չնայած Ձեր № 4960 հեռագրին, Կենտրոնում շարունակվում են տեղեկություններ ստացվել զանազան աղբյուրներից՝ Թիֆլիսից՝ Օրջոնիկիձեից, Բաքվից՝ մատժողկոմ Մուսաբեկովից, այն մասին, որ բավականաչափ միջոցներ ձեռք չեն առնվում Բաքուն պարենով ապահովելու համար, մի բան որ հետագայում բարդություններ է սպառնում։ Այդ հարցը լրիվ Աշխրանկի խորհրդի հատուկ քննարկմանու վճռական միջոցներ ձեռք առեք Բաքվի և միաժամանակ Վրաստանի ու Հայաստանի մատակարարման համար և համաձայն № 293 հեռագրի, կանոնավոր կերպով Կենտրոնին իրազեկ պահեր փաստական մատակարարման միջոցառումների մասին։ Անհապաղ պատասխանեցեք հեռագրով»։[1]

Այսպիսով Կոմունիստական պարտիայի Կենտկոմի և Վ. Ի. Լենինի ձեռնարկած վճռական միջոցառումների և դրանք հետևողականորեն կատարելու շնորհիվ, Սովետական Հայաստանը 1921 թ. հատկապես Վրաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց հետո, երբ երկաթգիծը բացվեց, Սովետական Ռուսաստանից ստացավ ամեն տեսակի հնարավոր աջակցություն։ Ալ. Մյասնիկյանը Սովետական Ռուսաստանից 1921 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներում ստացած օգնության մասին հրատարակել է հետևյալ թվերը. «Հայաստանը Սովետական Ռուսաստանից ստացել է 1,5 միլիոն ռուբլի ոսկով, մեկ միլիոն ռուբլի թղթադրամ ոսկու հաշվով, 3 միլիոն արշին մանուֆակտուրա, 500 հազար փութ հաց, 100 հազար փութ սերմացու, 50 հազար փութ ձուկ, 20 հազար փութ շաքար, երկու հազար փութ բամբակի սերմ, 20 հազար կոմպլեկտ պատրաստի հագուստ, 10 հազար կտոր գյուղատնտեսական գործիք և մեքենա, 10 ավտոմոբիլ, 10 սավառնակ, մեկ տպարան, մեկ լիտոգրաֆ, մեկ յուղահատ գործարան, 10 վագոն բժշկական իրեր, 2000 փութ թուղթ, 1000 ձի, մի քանի արհեստանոցներ, Մոսկվայում պահպանվող էշմիածնի (այժմյան Մատենադարանի—Ս. Ա.) ձեռագրերը, Լաղարյան ճեմարանի ամբողջ ունեցվածքը՝ 3 թանգարան, մեկ մեծ գրադարան։ Բացի այդ Սովետական Ադրբեջանը Հայաստանին ձրիաբար բաց է թողել անհրաժեշտ քանակի նավթ և այլ նավթամթերքներ»։[2]

Հայաստանի Սովետների 5-րդ համագումարում տված զեկուցման մեջ անդրադառնալով Սովետական Ռուսաստանից 1921 թ. ստացած տնտեսական օգնության հարցին Ս. Լուկաշինը ասել է. «Մենք անցյալ տարի ապրել ենք Ռուսաստանի օգնությամբ, այնտեղից ստանալով մոտ 2 միլիոն ոսկու արժողությամբ ապրանքներ, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանը ունեցել է սով բառի բուն նշանակությամբ»։[3]

Սովետական կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինը ուշադիր հետևում էր Հայաստանի էկոնոմիկայի վերականգնմանը նաև 1922—1923 թթ., չնայած իր հիվանդությանը և զբաղվածությունը։ Ժողկոմսովետը և Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը 1922 թ. Վ. Ի. Լենինի ցուցումներով մի քանի անգամ անդրադառնում են Հայաստանի էկոնոմիկայի հարցերին։ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը 1922 թ. հունվարի 25-ին Վ. Ա. Ավանեսովի նախագահությամբ քննում է Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանի հեռագիրը 1922 թ. գարնանացանի համար Հայաստանին սերմացու բաց թողնելու մասին։ Այդ հարցը Մատժողկոմատի և Հողժողկոմատի եզրակացությունների հիման վրա քննարկվում է նաև Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի փետրվարի 1-ի նիստում, խորհուրդը որոշում է հանձնարարել Հողժողկոմատին Հայաստանին բավարարել սերմացուով և ապահովել դրա արագ փոխադրումը։ 1922 թ. հոկտեմբերի 27-ին խորհուրդը Հայաստանում բամբակագործության զարգացման նպատակով բաց է թողնում մեկ և կես միլիոն ռուբլի ոսկով։ Վ. Ի. Լենինն անձամբ հետևում էր, որ այդ գումարն անմիջապես տեղ հասնի։

1922 թ. հոկտեմբերի 28-ին Ռ(ք)Պ Կենտկոմի քարտուղարին Լենինը գրել է. «...Գրեցեք ուրբաթ ոսկին Հայաստան ուղարկվա՞ծ է (կարծեմ որոշված է 1,5 միլիոն ռուբլի)։ Էլ ի՞նչ միջոցներ են ձեռք առնված հայերին օգնելու համար։ Պետք է արագացնել և ստուգել, սպասում եմ պատասխանի։[4]

---

[1] „Ленинский сборник", I, 20, էջ 227—228։

[2] «Նոր աշխարհ», 1922, № 1, էջ 111։

[3] «Խորհրդային Հայաստան», 1922, № 12։

[4] „Ленинский сборник", т. 35, էջ 330։

Հանրահայտ են Վ. Ի. Լենինի անհանգստությունը Հայաստանի տնտեսական դրության մասին, և նրա ցուցումները խաղողագործության, բամբակագործության զարգացման, ոռոգման սիստեմի կառուցման, էլեկտրիֆիկացման վերաբերյալ, որոնք արված են ինչպես Կովկասի կոմունիստներին ուղղված 1921 թ. ապրիլի 14-ի դիրեկտիվ-նամակում, այնպես էլ առանձին ցուցումների ձևով։ Օրինակ, 1921 թ. հոկտեմբերի վերջին Վ. Ի. Լենինը Աշխատանքի և Պաշտպանության հորհրդի գործերի կառավարիչ Վ. Ա. Սմոլյանինովին գրել է հետևյալ երկտողը։

«Ընկեր Սմոլյանինով, պետք է ավելի ուժգնորեն առաջ շարժել բամբակագործության հարցը Կովկասում՝ Ադրբեջանում (Մուղանի դաշտավայր) և Հայաստանում։ ...հետևեցնք, որ Պետրանկը շատ և ավելի ձեռնտու վարկ տա։ Նման երկտողեր կարելի է շատ գտնել Լենինյան ժողովածուի էջերում։

Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին ծավալվում էր նաև հետագա տարիներին։ Բերում ենք Սովետական Ռուսաստանի կառավարությանը կից՝ Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գարրիելյանի տվյալները, որ նա հրապարակել է «Հայաստանի օգնության Մոսկվայի լրատուի» 1923 թ. առաջին համարում։ Միայն 1922 թ. Ռուսաստանը Հայաստանին տվել է 500 հազար ռուբլի դանդաղ կարիքների համար։ Ամսական 166 հազար ոսկի ռուբլու հաշվով դոտացիա, 25 վագոն մանուֆակտուրա, 10 վագոն ցորեն անվերադարձ, 100 վագոն աշնանացան սերմացուի փոխտվություն, 650 հազար փութ հացահատիկ՝ անվերադարձ, ոաղմական դույլ՝ 3 վագոն, շոկոլադ՝ 165 փութ, թել՝ 200 փութ, շաքար 11 վագոն, կակաո՝ 200 փութ, բուժ. սարքավորում՝ 7 վագոն, հակահամաճարակային շիճուկ՝ 400 լիտր, հեռագրական և հեռախոսային սարքի մատակարարում՝ 2 վագոն, Առժողկոմատի կողմից բուժ-գործիքների մատակարարում՝ մեկ վագոն, բամբակագործության զարգացման համար փոխտվություն՝ 620 հազար ոսկի, լամպերի ապակի, բաժակ և այլն՝ 2 վագոն, որպես նվեր տեքստիլ ֆաբրիկա 18 իլիկանոց մանող և գործող ամբողջ սարքավորումով։ Սովետական Ռուսաստանը միայն Հայաստանի գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական գործիքների և մեքենաների գնման համար մինչև 1924 թ. բաց է թողել 10 միլիոն ռուբլու վարկ[2]։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին Սովետական Ռուսաստանից ու եղբայրական մյուս ռեսպուբլիկաներից ստացված օգնության շնորհիվ վերականգնվեց հիմնահատակ քայքայված Հայաստանը, կազդուրվեց մեր բազմաչարչար ժողովուրդը, որն իր ստեղծագործական տաղանդն ու աշխատունակությունը գործի դնելով վերաշինեց իր երկիրը, դարձնելով այն բարգավաճող, ծաղկող սոցիալիստական ռեսպուբլիկա։

## ПОМОЩЬ СОВЕТСКОЙ РОССИИ АРМЯНСКОМУ НАРОДУ

С. Т. АЛИХАНЯН

(Резюме)

Велика роль Советской России в деле установления и упрочения Советской власти в Армении. Советская Россия в 1918—1922 гг. оказывала армянскому народу систематическую политическую, дипломатическую, военную и экономическую помощь. Бескорыстная помощь Советской России обусловливалась общими закономерностями социалистической революции и социалистичекого строительства, самой сущностью социалистической системы.

В настоящей статье вкратце отражена экономическая помощь Советской России армянскому народу. Особое место отведено в статье вопросу о материальной и моральной поддержке Советской России сотням тысячам армянских беженцев, нашедших приют в России.

По инициативе В. И. Ленина Советская Россия оказала исключительную помощь армянскому народу в первые годы после установления Советской власти в Армении. Благодаря этому быстро стала восстанавливаться до края разоренная страна.

Помощь, оказанная Советской Россией армянскому народу,— это яркое проявление честного и последовательного исполнения своего интернационального долга первым в мире социалистическим государством.

---

[1] „Ленинский сборник", т. 23, էջ 48։

[2] «Խորհրդային Հայաստան», 1924, № 203։